Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 695 - Ա
որոշման

«ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՐԱՆՏ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հիմնանորոգել և բարեկարգել Երևան քաղաքի Հրանտ Վարդանյանի անվան փողոցը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952)
4.	Ծրագիրը կատարողը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Շենգավիթ վարչական շրջան, բնագավառը՝ քաղաքաշինություն
6.	Ծրագրի բյուջեն	1,500,000,000 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	Երևան համայնք (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան 0015, Արգիշտի 1):
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Երևան քաղաքի Հրանտ Վարդանյանի անվան փողոցի հիմնանորոգման աշխատանքների իրականացում (շինարարական աշխատանքներ, փողոցի շինարարության հետ կապված նախագծային, տեխնիկական և հեղինակային հսկողության աշխատանքներ, շինարարական նյութերի ձեռքբերում և ներմուծում)՝ 1,340,000,000 դրամ: Միջոցառումները նախատեսվում են իրականացնել 2025 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 2) Երևան քաղաքի Հրանտ Վարդանյանի անվան փողոցի բարեկարգման աշխատանքների իրականացում (կանաչապատման և կահավորման աշխատանքներ, լուսավորության անցկացման աշխատանքներ, կանաչապատման, կահավորման և լուսավորության համար նախատեսված ապրանքների ձեռքբերում և ներմուծում)՝ 160,000,000 դրամ: Միջոցառումները նախատեսվում են իրականացնել 2025 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) շինարարական աշխատանքների իրականացում՝ 800,000,000 դրամ. 2) շինարարական նյութերի ձեռքբերում և ներմուծում՝ 500,000,000 դրամ. 3) շինարարական աշխատանքների հետ կապված նախագծային, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում՝ 40,000,000 դրամ. 4) կանաչապատման, կահավորման և լուսավորության անցկացման հետ կապված ծառայությունների ձեռքբերում՝ 60,000,000 դրամ. 5) կանաչապատման, կահավորման և լուսավորության անցկացման համար նախատեսված ապրանքների ձեռքբերում և ներմուծում 100,000,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Երևանի քաղաքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1) ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրակա-նացվելու է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբար-ձուների խորհրդի կողմից. 2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

03.11.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ